ՎԱՐԴԱՆ ԴԵՐԻԿՅԱՆ

ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ ՊԱՏԿԵՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՒ ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ

Ինչպես եկեղեցական տոների շարքում, այնպես արվեստում եւ գրականությունում իրենց հանդիսավորությամբ, պայծառությամբ եւ գեղարվեստական նշանակալիությամբ առանձնանում են Ս. Ծննդյան եւ Ս. Հարության թեմաներով ստեղծագործությունները:

Քրիստոնեության սկզբնական շրջանից Քրիստոսի տնօրինությանը (կյանքին եւ քարոզությանը) նվիրված տերունական (Հիսուսին վերաբերող) տոները երկու խմբի էին բաժանվում, որոնցից առաջինը հիշատակն էր Քրիստոսի երկրավոր կյանքի նախնական շրջանի՝ մինչեւ Մկրտությունը քարոզությունը եւ առաջին հրաշքները, իսկ երկրորդը՝ հաջորդող շրջանը:

Առաջին խումբը սկսվում էր հունվարի 5-ին եւ ավարտվում հունվարի 13-ին, իսկ բուն տոնի օրն էր հունվարի 6-ը, անկախ նրանից, թե շաբաթվա որ օրն էր ընկնում: Այս տոնը կոչվում էր Աստվածահայտնություն կամ պարզապես հայտնություն, իսկ երկրորդ խումբը կոչվում էր Հարություն եւ սկսվում էր Ծաղկազարդով ու տեւում մինչեւ Հոգեգալուստ:

Այսպիսով, Աստվածահայտնությունը ներառում էր Գաբրիել հրեշտակի Ավետումը, Եղիսաբեթի այցելությունը, Բեթղեհեմի այրում ծնունդը, հրեշտակների փառաբանությունը, ութօրյա թլփատությունը, մոգերի երկրպագությունը, քառասնօրյա ընծայումը, փախուստը Եգիպտոս, Հորդանանում մկրտվելը, երկնային նշանները, Հովհաննես Մկրտչի՝ Հիսուսի մասին վկայությունները՝ մինչեւ հրաշագործությունների սկիզբը:

Ժամանակի ընթացքում Աստվածահայտնության այս շարքից դուրս եւ համապատասխան ժամանակային հաշվարկներով առանձնաբար սկսեցին նշվել Տյառնընդառաջը եւ Ավետումը: Քանի որ մեր Եկեղեցին Ծնունդը կատարում է հունվարի վեցին, ըստ այդմ Տյառնընդառաջը եւ Ավետումը համապատասխանաբար կայուն կերպով սկսեցին նշվել փետրվարի 14-ին եւ ապրիլի 7-ին:

Համաձայն հրեական օրենքի, անվանակոչությունը տեղի էր ունենում ծննդյան ութերորդ օրը՝ թլփատության ժամանակ, եւ այս պատճառով Աստվածահայտնության ութօրյակը փակվում է հունվարի 13-ով, որը նվիրված է Քրիստոսի անվանակոչությանը եւ հիշատակն է Ավետման ժամանակ Մարիամին Գաբրիել հրեշտակի ասած հետեւյալ խոսքերի. «Եւ ահա՛ դու կհղիանաս եւ կծնես որդի ու Նրա անունը Հիսուս կդնես» (Ղուկ. Ա 31): Անվանակոչությունը կատարվում է Ս. Ծննդյան ութերորդ օրը. «Նրա անունը Հիսուս դրվեց, ինչպես հրեշտակի կողմից կոչվել էր, երբ դեռ չէր հղացվել մոր որովայնում» (Ղուկ. Բ 21) խոսքերի համաձայն:

Մինչեւ երկրորդ դարի կեսը Աստվածահայտնության այս շարքում առավել նշանակալից էր համարվում Մկրտությունը: Հաջորդ երկու դարերում, սակայն, Հռոմեական եւ Բյուզանդական եկեղեցիները ապրիճանաբար մկրտությունից անջատեցին Ծնունդը՝ այն սկսելով կատարել դեկտեմբերի 25-ին, որը պայմանավորված էր երկու պատճառներով: Արեւմուտքում այդ օրը հեթանոսական Դեկոս աստվածության տոնն էր կատարվում, որի

հիշատակը մթագնելու եւ հեթանոսական տոնը քրիստոնեականով փոխարինելու համար Ծնունդը անջատելով Մկրտությունից՝ սկսեցին կատարել դեկտեմբերի 25-ին, իսկ Արեւելքում՝ Երուսաղեմում, ուր ընդունված էր Ծննդյան հիշատակը կատարել Բեթղեհեմում, իսկ Մկրտությունը՝ Հորդանանում, մեկ օրվա ընթացքում դժվար էր լինում Բեթղեհեմից Հորդանան գնալը, որի համար այստեղ եւս այս երկու տոները սկսեցին անջատաբար նշել: Մեր Եկեղեցին, սակայն, մերժեց նման բաժանումը եւ առաջին դարերից եկող հնավանդ սովորությամբ Ծնունդը եւ Մկրտությունը կատարում է միասին՝ հունվարի 6-ին, որով սկսվում է Աստվածահայտնության ութօրյակը եւ շարունակվում մինչեւ անվանակոչություն, իսկ մոգերի գալստյան, հովիվների երկրպագության, Եգիպտոս փախստյան եւ դարձի հիշատակները Ծննդյանը եւ Մկրտությանը զուգընթաց նշվում են ութօրյակի մնացյալ միջանկյալ օրերին:

Տերունական այս տոնաշարը արտահայտություն է գտել նաեւ հայ միջնադարյան մանրանկարչության Ճարակնոցի ու Գանձարանի Ս. Ծննդյան Ութօրեքի կանոններում, ուր միաժամանակ պատկերվում եւ բանաստեղծորեն ներկայացվում են Ս. Ծնունդը Բեթղեհեմի այրում, հրեշտակների փառաբանությունը, հովիվների ու մոգերի երկրպագությունը, իսկ շարականներում եւ գանձերում՝ նաեւ Մկրտությունը: Մանրանկարչությունում եւս Ս. Ծննդյան պատկերներում Մկրտությունը որոշակիորեն իր արտացոլումն է գտել՝ արտահայտվելով հետեւյալ երեք ձեւերով՝

Ա. Տերունական պատկերներում Ս. Ծննդյանը հաջորդում է Մկրտությունը:

Բ. Միեւնույն էջի պատկերի երկմաս կառուցվածքով ներկայացվում են Ս. Ծնունդը եւ Մկրտությունը:

Գ. Ս. Ծննդյան լոգանքի տեսարանի կոնքում ջրի մեջ պատկերվող մանուկը ընդհանուր տեսարանի նույն գունապատկերային համապատկերում ներկայացվում է նաեւ Մկրտության տեսարանում: Պատկերման այս վերջին ձեւը մեծ վարպետություն է պահանջում, եւ այն հայ միջնադարյան մանրանկարչությունում իր գեղարվեստական բարձրակետին է հասել Թորոս Ռոսլինի՝ Մալաթիայի Ավետարանի Ս. Ծննդյան եւ Ս. Հարության մանրանկարներում:

Որքան Հրաշափառ էր Հիսուսի հարությունը, այնքան պարզ եւ հասարակ էր Նրա Ծնունդը Բեթղեհեմյան այրում, բայց եւ խորհրդավոր ու անմեկնելի:

Հոգեւոր այս խորհուրդը ունեն նաեւ Ս. Ծննդյան մանրանկարները: Ինչպես որ միջնադարյան մեկնություններում է ասվում, թե Քրիստոս երկիր իջավ, որպեսզի մարդը երկինք բարձրանա, այնպես Ս. Ծննդյան մանրանկարներում ասվողի՝ Բեթղեհեմյան քարայրին իջնելը խորհրդանշում է երկնքից երկիր իջնելը եւ նույն ձեւով Ս. Ծննդյան այրի՝ մինչեւ երկինք ելնելը:

Պայմանավորված ավետարանական պատումի թեմատիկ հաջորդայնությամբ՝ հայկական միջնադարյան նկարազարդ ձեռագիր ավետարաններում Ս. Ծննդյանը նվիրված մանրանկարները հաջորդում են Ավետմանը եւ նախորդում Տյառնընդառաջին, իսկ վերջինս էլ՝ Մկրտությանը: Սակայն, քանի որ Հայոց Եկեղեցին նույն օրը՝ հունվարի վեցին է կատարում եւ՛ Ս. Ծննդյան, եւ՛ Հորդանանում Մկրտության տոները, ուստի երբեմն Ծննդյանը անմիջապես հաջորդում է Մկրտությունը: Նաեւ վերստին պայմանավորված գործողությունների անմիջաբար մեկը մյուսին հաջորդելով եւ միմյանց միջեւ եղած իմաստային ներքին

ընդհանրությամբ, Քրիստոսի տնօրինության գլխավոր դրվագները ներկայացնող Տերունական պատկերները որոշակի զույգեր են կազմում, ինչպես օրինակ Հարություն, Համբարձում: Ծննդյան պատկերը նման զույգ է կազմում Ավետման կամ Մկրտության հետ:

Տերունական պատկերաշարը համանման ընդհանրություն ունեցող մյուս թեմատիկ զույգերի հետ միասին, պայմանավորված միջնադարյան գրքարվեստի արտահայտչական հնարավորություններով, կոմպոզիցիոն առումով արտահայտվում է հետևյալ երկու ձևերով.

ա. Ձեռագիր մատյանի բացված էջերում իրար կողքի են գետեղվում թեմատիկ զույգ կազմող մանրանկարները:

բ. Գործողությունների հաջորդայնությունը արտահայտվում է հենց մեկ մանրանկարի շրջանակում:

Միջնադարյան արվեստում Տերունական պատկերաշարի թեմաներից յուրաքանչյուրը, այդ թվում եւ Ծննդյանը նվիրված մանրանկարները, որքան տարբերվեն միմյանցից կատարողական արվեստի վարպետությամբ, ինչպես նաեւ տարբեր դարերի եւ ժողովուրդների գեղարվեստական մտածողությանը բնորոշ ոճական յուրահատկություններով, բոլորն էլ ունեն միեւնույն պատկերագրական կանոնական կառուցվածքը, քանի որ նրանց սյուժետային հիմքում ընկած են սուրբգրային միեւնույն վկայություններն ու քրիստոնեության առաջին դարերում ձեւավորված ավանդությունները:

Համաձայն այդ կառուցվածքի, Ծննդյան մանրանկարների կենտրոնում Բեթղեհեմյան քարայրն է, որի ներսում՝ մսուրում, դրված է նորածին Հիսուսը: Մսուրի մի կողմում Աստվածամայրն է, իսկ մյուս կողմում՝ եզը եւ ավանակը: Քարայրի վերեւում հրեշտակաց դասն է, որից քիչ ավելի ներքեւ՝ աջ եւ ձախ կողմերում, մոգերն են իրենց երիվարներով, ու հովիվները՝ ոչխարների եւ գառների հետ, իսկ պատկերի ստորին մասում՝ Հովսեփը եւ Նորածնին լողացնող Եւան: Թորոս Ռոսլինի նկարազարդած Մալաթիայի Ավետարանում Հրեշտակաց դասը, հովիվներն ու մոգերը եւ Հովսեփն ու Եւան վերից վար իջնող եւ ելնող հաջորդայնությամբ մի շրջանակ են կազմում, որի կենտրոնում գտնվում է Բեթղեհեմյան քարայրը, շնորհիվ որի մանրանկարի կառուցվածքում ընդգծվում է Ս. Ծննդյան խորհուրդը:

Արվեստաբան Լեւոն Զուքասզյանը գրում է, որ մանրանկարի հորինվածքում շրջանակի այս գաղափարը դնելը, որում վերեւում գտնվող հրեշտակների մեծությունը նախապատրաստվում է ասպիճանականորեն՝ կերպարների ներքեւից դեպ վեր գնացող խոշորացումով, ըստ երեւույթին գալիս է միջնադարյան աստվածաբանության ամենանշանավոր դեմքերից Դիոնիսիոս Արիսպագացու երկնային քահանայապետությանը նվիրված գործի այն ըմբռնումից, համաձայն որի բոլոր երկնային դասերը եւ արարածները Աստծո գահի շուրջը կազմում են լուսավոր մեծ շրջաններ, եւ որքան նրանք մոտենում են Աստծուն՝ լույսի աղբյուրին, այնքան նրանց փայլն ավելանում է[1]:

Ս. Ծննդյան տեսարանի պահպանված հնագույն օրինակը հայ արվեստում Զ դարի Օձունի կոթողում է, ինչպես նաեւ հայկական միջավայրում պահպանված Էջմիածնի հռչակավոր Ավետարանի (Երեւանի Մատենադարան, ձեռ. թ. 2374) փղոսկրյա կազմին, ուր առանձին երկու դրվագներով ներկայացված են Ծնունդը Բեթղեհեմի այրում եւ մոգերի

1 **Լ. Զուքասզյան**, «Ծննդյան» թեման Թորոս Ռոսլինի արվեստում, «Բանբեր Մատենադարանի», հտ. 15, Եր., 1986, էջ 152:

երկրպագությունը: Նույն Ավետարանի վերեւում գտնվող եւ Զ-Է դարերով թվագրվող չորս մանրանկարների շարքում պատկերվում է նաեւ մոգերի երկրպագությունը, ուր Տիրամայրը հիշեցնում է բյուզանդական հարթաքանդակներ: Հատկանշական է, որ Տիրամոր թիկունքում գտնվող Քրիստոս ասես զինվորական վահանի վրա պատկերված լինի:

Ժ դարում Ս. Ծնունդը պատկերված է 915-921 թթ. կառուցված Աղթամարի Ս. Խաչ եկեղեցում: Ծննդյան պարականոն մի դրվագը՝ «Մանկան լողացումը (լոգանքը)», մաս է կազմում Տաթեւի վանական համալիրի 930 թ. կառուցված Ս. Պողոս-Պետրոս եկեղեցու որմնանկարներին:

Թե՛ գեղարվեստական կատարման մասշտաբայնությամբ եւ թե՛ պատկերագրական նախօրինակի հնությամբ առանձնանում է 1038 թ. նկարազարդված եւ այժմ Երեւանի Մատենադարանում պահվող թ. 6201 ձեռագրի Ս. Ծննդյան պատկերը, ուր մոգերը ոչ թե երեքն են, այլ չորսը: Պատկերագրական այս ձեւը գալիս է Սաղմոսաց գրքի «Թարսիսի եւ կղզիների թագավորները նվերներ թող մատուցեն Նրան, Արաբիայի եւ Սաբայի արքաներն ընծաներ թող բերեն Նրան» (Սաղմ. ՀԱ 10-11) տողերից: Քանի որ այստեղ չորս երկրներ են հիշվում, ուստի եւ մոգերը պատկերագրական մի հին նախօրինակի պատկանող խմբում չորսն են:

Այս մանրանկարում Բեթղեհեմյան այրը իջնող մի գծով բաժանված է արտաքին աշխարհից: Մոգերի՝ աստիճանաբար քարայրին մոտենալն ու մտնելը նկարիչը վարպետորեն պատկերել է նկարի վերին շրջանակի եւ մոգերի թագերի հարաբերակցությամբ: Մոգերից յուրաքանչյուրը որքան մոտենում է այրին, այնքան նրա թագը շրջանակից ներքեւ է իջնում, որը ցույց է տալիս նրանց՝ քարայրին մոտենալը:

Տիրամայրն այստեղ ոչ թե կիսաթեք պառկած է, այլ նստած, որն, ինչպես գրում է Տատյանա Իզմայիլովան, պատկերագրական այն տարբերակն է, ուր Տիրամոր նստած դիրքը խորհրդանշում է ամենասրբուհի կույսի անցավ երկունքը[2]:

Այս մանրանկարում բացակայում է Մանկանը լողացնելու տեսարանը:

Ս. Ծննդյան ձեւավորված պատկերագրությունը իր բոլոր դրվագներով գտնում ենք ԺԱ դարի երկրորդ կեսին գրված Մուղնիի Ավետարանում (Երեւանի Մատենադարան, ձեռ. թ. 7736):

Այժմ թե՛ այս եւ թե՛ մի շարք այլ մանրանկարների հիման վրա ներկայացնենք Ս. Ծննդյան պատկերագրությունը դրվագ առ դրվագ:

Մանրանկարի կենտրոնում գտնվող Բեթղեհեմյան այրի կենտրոնում կիսաթեք պառկած Տիրամայրն է: Գրեթե բոլոր մանրանկարներում տարբեր արտահայտչամիջոցներով միջնադարյան ծաղկողները վարպետորեն շեշտել են Տիրամոր հոգնությունը ծնունդից հետո, որով ցանկացել են արտահայտել մարդեղության խորհուրդը, թե Քրիստոս մարդեղացավ՝ ծնվելով Սուրբ Կույսից: Մարիամը սովորաբար ներկայացվում է նստած կամ հենված թագավորական գահը խորհրդանշող կարմիր բարձին: Արքայականի նույն իմաստն ունի նաեւ Տիրամոր հանդերձներում իշխող կարմիրը, քանի որ Տիրամայրը, իրենում կրելով, ապա եւ գրկում պահելով, որպես գահ ծառայեց մարդկության Փրկչի համար: Տիրամոր թիկնոցի ուսագլխերին ու գլխաշորի ճակատին պատկերված ասպղերը խորհրդանշում են կուսությունը չխախտող ծնունդը:

2 **Т. Измайлова**, Армянская миниатюра XI века, Москва, 1979, стр. 58:

Այսպիսով, մարդեղության խորհուրդը, Փրկչի Աստված լինելով մարդանալը Տիրամոր կերպարում արտահայտվում է մարդկայինը ներկայացնող ծննդյան հոգնությամբ, աստվածայինը խորհրդանշող արքայական կարմիրով եւ անխախտ կուսության նշանակ ասղերով:

Ավետարանում ասվում է, որ Հիսուսի ծնվելուց հետո Մարիամը «խանձարուրի մեջ փաթաթեց Նրան ու դրեց մսուրի մեջ» (Ղուկ. Բ 7): Մովսես Խորենացու Ս. Ծննդյան շաբականում այս մասին ասվում է. «Անբաւելին երկնի եւ երկրի ի խանձարուրս պատեցաւ»[3]: Այսինքն Նա, ում իրենցում չէին կարող կրել երկինքն ու երկիրը, խանձարուրով պատվեց: Մսուրում այսպես անշքացրեց ու փոքրացրեց Իր անձը, որ համարձակ լինենք Իրեն դիմելիս եւ ի հակադրություն Ադամի, որի հպարտության, բարձրամտության, աստվածային պատվիրանի զանցառության պատճառով մարդկությունը կորցրեց դրախտային փառքը, այն վերագտնենք Քրիստոսի խոնարհությամբ: Ինչպես ԺԲ դարի Կիլիկյան Հայաստանի մեկնիչներից Իգնատիոս Շնորհալին է գրում. «Արդ այսպէս փոքր կացոյց զանձն անշքացեալ, զի համարձակ լիցուք մերձենալ առ նա: Ընտրէ զխոնարհութիւն ընդդէմ առաջին բարձրութեան, որով կորուսաք զփառսն»[4]: Իսկ Ե դարի եկեղեցական մատենագիր Հիպոլիտոս Բոստրացին գրում է. «Աստված մեզ մուտ իջավ, որպեսզի մենք վեր բարձրանանք, որտեղից որ իջել ենք»[5]: Եփրեմ Ասորին նույն այս համաբանությամբ ասում է, որ Քրիստոս երկիր իջնելով՝ հաշտեցրեց երկինքն ու երկիրը. «Միաբանեցան երկինք եւ երկիր զօրհնութիւնս միոյ միջնորդի, որ հաշտեցոյց զնոսա ծննդեամբն Իւրով»[6]:

Նույն այս միտքը Ագաթանգեղոսը արտահայտել է հետեւյալ բնորոշմամբ. «Էջ յանարգութիւն, զի զմեզ բարձրացուցէ»[7]: Մսուր դրվելը եւս ներկայացվում է որպես ինքնախոնարհությամբ մարդկային մարմինը վեր բարձրացնել եւ մարդկային սկզբնատիպ պատկերին հաղորդ դարձնել: Կյուրեղ Ալեքսանդրացին այս մասին գրում է. «Եւ ի մսուր յանբանից եդաւ, վասնզի մարդկային բնութիւնս յերբեմն գեղեցիկ ստեղծմանէ փոխեցաւ յանասնական ախտս»[8] եւ վկայակոչում է «Սաղմոսաց գրքի» հետեւյալ տողերը. «Մարդ ի պատուի էր եւ ոչ իմացաւ, հաւասարեաց շնչաւոր անասնոց» (Սաղմ. ԽԸ 13, 21):

Մսուրում ծնվելու եւ խանձարուրում պատվելու մասին Զաքարիա Ա Զագեցի հայրապետը (կթդ. 855-876 թթ.) գրում է, որ Բանն Աստված ծնվեց քարայրում, որպեսզի մարդիկ երկինք հրավիրվեն. «ի խանձարուրս պատի՝ զի զսաղարթապատ եւ զմաշկեղէն հանդերձ պատառեսցէ»[9]: Սաղարթապատ հանդերձ ասելով՝ Զագեցին եւ մյուս մեկնիչները նկատի ունեն թզենու տերեւը, որը մարդկության առաջին զգեստը դարձավ ադամական մեղքից հետո: Տաթեւացու բնորոշմամբ, Քրիստոս խանձարուրով կապվեց, որ մեր կապանքները լուծի, խանձարուրով պատվեց, որ մեր բարի գործերից մերկացյալ եւ մեղքով ծածկված մարմինը փրկության հույսով պատի եւ որ Ադամը ստեղծվեց դրախտում, ապա երկիր ընկավ

3 «Շարական», էջ 22:

4 **Իգնատիոս Շնորհալի,** Մեկնութիւն Սրբոյ Աւետարանին, որ ըստ Ղուկասու, Կ. Պոլիս, 1824, էջ 67:

5 «Անտիպատոսի եպիսկոպոսի Բոստրացոյ ի Ծնունդն Քրիստոսի խօսք երկրորդ», աշխտ. Հ. Քյոսեյանի, «Գանձասար», հտ. Ա, Եր., 1992, էջ 28:

6 «Սրբոյն Եփրեմի Մատենագրութիւնք», հտ. Դ, Վենետիկ, 1836, էջ 31:

7 **Ագաթանգեղոս,** Պատմութիւն Հայոց, աշխտ. Ա. Տեր-Ղեւոնդյանի, Եր., 1983, էջ 210, 377:

8 **Սարգիս Կունդ,** Մեկնութիւն Աւետարանին Ղուկասու, աշխտ. Եզնիկ եպս. Պետրոսյանի, Ս. Էջմիածին, 2005, էջ 75:

9 **Զաքարիա Ա Զագեցի,** Ճառք, աշխտ Հ. Պ. Անանյանի, Վենետիկ, 1995, էջ 14:

(արտաքսվեց), իսկ Քրիստոս քարայրում ծնվեց եւ երկինք բարձրացավ, որ մեղուցյալ մարդը եւս բարձրանա[10]:

Քրիստոսի՝ Բեթղեհեմում գտնվող այրում ծնվելով կատարվեց նաեւ Միքեի մարգարեությունը. «Եւ դու, Բեթղեհեմ, Եփրաթայի սակավամարդ փոքր, կլինես Հուդայի երկրի հազարավորների մեջ, քեզնից պիտի ելնի ինձ համար Իսրայելի մի իշխան եւ նրա ծագումը աշխարհի սկզբի օրից է» (Միքե Ե 1-2):

Մսուրն ու խանձարուրը նաեւ զոհաբերության խորհուրդն ունեն: Համաձայն միջնադարյան մեկնությունների, մսուրը նաեւ զոհասեղան է, ուր դրված է բանական զոհը՝ Քրիստոս, եւ գերեզման է ու դժոխք, որի կապանքները Իր Ծննդյամբ եւ Խաչելությամբ ու մահվամբ իբրեւ պատանք կրեց եւ քանդեց Քրիստոս: Ահա այս պատճառով մանրանկարներում այն խանձարուրը, որով պատված է Քրիստոս, ավելի շատ պատանք է հիշեցնում:

Մսուրում Հիսուսի մոտ պատկերվում են նաեւ եզ ու ավանակ: Թեեւ Ավետարանում նրանց մասին որեւէ հիշատակություն չկա, սակայն համաձայն ավանդության, վերջիններիս շունչը ծառայել է նորածին մանկանը տաքացնելու համար: Միաժամանակ այս կենդանիներով այլաբանորեն ակնարկվում են Եսայու մարգարեության հետեւյալ տողերը. «Եզն իր Տիրոջն է ճանաչում եւ էշը՝ իր Տիրոջ մսուրը, բայց Իսրայելն Ինձ չճանաչեց»: Նաեւ այն միտքն է շեշտվում, որ մսուրը, որից սնվում էին անբան անասունները, Քրիստոսի խանձարուրով պատվելով եւ այնտեղ դրվելով, դարձավ հոգեւոր սնարան, որին դիմողները ստանում են ճշմարիտ վարդապետությունը:

Մսուրի, որպես հոգեւոր սնարանի գաղափարը գալիս եւ շաղկապվում է Բեթղեհեմ անվանը, որը համաձայն միջնադարյան մեկնիչների, ստուգաբանվում է որպես հացի տուն: Ղուկասի Ավետարանում ասվում է միայն, որ Քրիստոս մսուրում դրվեց. քարայրի մասին որեւէ հիշատակություն չկա: Սակայն մինչեւ նոր ժամանակները ձգվող հնուց եկած սովորությամբ քարայրները ախոռի տեղ էին գործածում, եւ համաձայն ավանդության, նման մի քարայրում է ծնվել մարդկության Փրկիչը: Դ դարում Հեղինե թագուհու՝ Բեթղեհեմում կառուցած Ս. Ծննդյան եկեղեցու մեջ Քրիստոսի ծննդյան ցույց տրվող տեղը մի քարայր է: Նաեւ ինչպես Ծննդյան շարականում է ասվում. «Ի սուրբ այրին բազմեցար»:

Այսպիսով՝ քարայրը խորհրդանշում է Բեթղեհեմը՝ Հացի տունը, եւ այդ տանը ծնվեց ու անասունների սնարանում՝ մսուրում, դրվեց բանական հացը, ինչպես Քրիստոսն ասաց Ինքն Իր մասին խորհրդավոր ընթրիքի ժամանակ. «Առե՛ք, կերե՛ք, այս է Իմ մարմինը» (Մտթ. ԻՁ 26): Ը դարի նշանավոր մատենագիր Ստեփանոս Սյունեցու բնորոշմամբ, Բեթղեհեմ բառը հացի տուն է թարգմանվում, ուր ծնվեց կենդանի հացը, որ երկնքից իջավ եւ աշխարհին կենդանություն է տալիս: «Բեթղէէմ թարգմանի տուն հացի, ուր ծնանի հացն կենդանի, որ էջն յերկնից եւ տա կենդանութիւն աշխարհի»[11]:

Բեթղեհեմյան այրի վրա հաճախ պատկերվում են երկու արմավենիներ՝ համաձայն Դավթի սաղմոսների «Արդարներն արմավենու պես կծաղկեն» (ՂԱ 13) տողի:

Բեթղեհեմյան աստղ պատկերվում է կա՛մ այրում՝ մսուրի վրա, մինչեւ երկինք ձգվող լուսեղեն ճառագայթներով, որոնք ցույց են տալիս նրա անցած հետագիծը մոգերին առաջնոր-

10 **Գրիգոր Տաթեւացի**, Գիրք քարոզութեան, որ կոչի Զմերան հատոր, Կ. Պոլիս, 1740, էջ 41:

11 **Ստեփանոս Սիւնեցի**, Մեկնութիւն չորից աւետարանչացն, աշխատ. Գարեգին կթող. Հովսեփյանի, Եր., 1994, էջ 17:

դելիս մինչ քարայրում հանգչելը, կա՛մ երկնքում՝ ուղիղ այրի վերեւում, եւ լուսեղեն ճառագայթներն են իջնում մսուրի վրա: Ճառագայթները սովորաբար թվով երեքն են լինում, որը խորհրդանշում է Սուրբ Երրորդությունը: Հոգեւոր այն խորհուրդը, թե Քրիստոս երկիր իջավ, որ մարդը երկինք ելնի, եւ որ Հիսուսի ծնունդյամբ երկինքը վայր խոնարհվեց եւ երկիր բարձրացավ, մանրանկարիչները վարպետորեն պատկերել են աստղի միջոցով: Բեթղեհեմյան այրի վրա հանգչող աստղը իր լուսեղեն ճառագայթներով թվում է, թե վայր է խոնարհեցնում երկինքը եւ դեպ այնտեղ բարձրանում շրջանաձեւ հորինվածքով ասես վեր ձգվող քարայրը: Մսուրի վրա հանգչող աստղը խորհրդանշում է, որ Հիսուս թե՛ երկրում է՝ մարդկանց մեջ եւ թե՛ երկնքում՝ Հոր մոտ:

Ղուկասի Ավետարանում ասվում է, որ քարայրում բնակվող հովիվներին Հիսուսի ծնունդը ավետեց հրեշտակը, եւ նրան միացած երկնային զորքերի բազմությունը օրհնում էր Աստծուն եւ ասում. «Փառք Աստծուն՝ բարձունքներում, եւ երկրի վրա խաղաղություն եւ հաճություն՝ մարդկանց մեջ» (Ղուկ Ա 14): Ծննդյան մանրանկարներում ավետարանական այս հատվածն արտահայտվել է հետեւյալ ձեւով. քարայրի վերեւում՝ դրսից, հրեշտակների դասն է՝ պատկերված աստղի ճառագայթների աջ եւ ձախ կողմերում: Աստծուն ուղղված օրհնությունը արտահայտվում է հրեշտակների խմբի (սովորաբար երեք) աստղի ճառագայթներին՝ աստվածային լույսի շիթին երկրպագմամբ, իսկ մեկը ուղղված է դեպ հովիվը կամ հովիվները՝ նրանց ավետելով մարդկության Փրկչի ծնունդը: Հովիվներից մեկը երբեմն պատկերվում է սրինգ նվագելիս:

Մատթեոսի Ավետարանում ասվում է, որ Արեւելքից եկած մոգերը, երկրպագելով նորածին Հիսուսին եւ «բանալով իրենց գանձատուփերը՝ նրան նվերներ մատուցեցին՝ ոսկի, կնդրուկ եւ զմուռս» (Մտթ. Բ 11): Մանրանկարներում մոգերը պատկերվում են՝ գանձատուփը ձեռներին: Համաձայն մեկնությունների, ոսկին տրվեց որպես երկրային թագավորի՝ խորհրդանշելով Հիսուսի իշխանական, արքայական տերությունը եւ Դավթի թագավորական ցեղից լինելը: Կնդրուկով՝ խունկով քարոզվեց աստվածությունը. խունկը իր անուշահոտությամբ լուծանեց մահվան ժանտահոտությունը, որը տարածվել էր ադամական մեղքով: Զմուռսն էլ ակնարկում էր խաչելությամբ չարչարվելը, մեռնելը եւ հարություն առնելը, քանի որ Հին Արեւելքում զմուռսով էին պատում ննջեցյալներին:

Այս երեք ընծաների պարունակած հոգեւոր խորհրդի մասին Ստեփանոս Սյունեցին խտացված մի ընդհանրությամբ գրում է. «Ոսկի էին մատուցում՝ իմանալով, որ թագավոր է, կնդրուկ, քանզի Աստված է, զմուռս՝ խորհրդանշելով մահը, որ ընդունելու էր մեր փրկության համար»[12]:

Մոգերի տված այս երեք ընծաների մասին, որոնք սովորաբար տրվում էին թագավորներին, բազմաթիվ հիշատակություններ կան Սուրբ Գրքում: Այսպես, Եսայու մարգարեությունում ասվում է. «Դեպի քեզ են գալու ուղտերի երամակները, քեզ ծածկելու են Մադիամի եւ Գեփայի ուղտերի երամակները, բոլորը Սաբայից պիտի գան՝ բերելով ոսկի, կնդրուկ ու թանկագին քարեր եւ տալու են Տիրոջ փրկության ավետիսը» (Եսայի Կ 6): Թագավորաց գրքում ասվում է, թե Սաբան ուղտով ոսկի եւ խունկ ընծայեց Սողոմոնին (Գ Թագ. Ժ 2):

Մատթեոսի Ավետարանում թեեւ միայն ասվում է. «Ահա Արեւելքից մոգերը եկան» (Մտթ. Բ 2) եւ չի նշվում ո՛չ նրանց թիվը եւ ո՛չ տարիքն ու անունները, սակայն ելնելով ըն-

12 **Անդ**:

ծանների թվից՝ ասվում է, որ նրանք երեքն էին եւ ըստ քրիստոնեության առաջին դարերի ավանդության՝ նրանց անուններն էին Գասպար, Մելքոն եւ Բաղդասար, եւ թե նրանք համապատասխանաբար Հնդկաց ու Պարսից աշխարհներից էին եւ Արաբիայից:

Ի տարբերություն միջնադարյան մեկնությունների սեղմ տողերի, ընծաների այլաբանական խորհուրդը առավել ծավալուն, գեղարվեստորեն հյութեղ եւ տեսանելի առարկայական նկարագրությամբ արտահայտված է «Գիրք տղայութեանն Քրիստոսի» արդեն հիշված գործում, ուր երեք մոգերը իրենց ընծաները քարայրում տալուց հետո երբ խոսում են իրար հետ, Բաղդասարն ասում է, որ ոսկին մանկանը մատուցելիս տեսավ «որդի արքայի, նստեալ ի վերա բարձրութեան աթոռոյ գահոյից եւ զօրք բազում անկեալ երկիր պագանէին առաջի Նորա»[13] (Արքայի որդի՝ նստած թագավորական բարձր գահի վրայ եւ հրեշտակների զորքը վայր խոնարհված երկրպագում էր Նրան): Այսինքն, ոսկին թագավորական փառքի նշանն է: Գասպարը ասում է, որ կնդրուկը տալուց հետո նորածին մանկանը տեսավ որպես Աստծո որդի՝ բազմած «յաթոռ փառաց, զօրք անմարմնոց հրեշտակացն սպասաւորէին նմա» (Փառքի աթոռին բազմած եւ անմարմին հրեշտակների զորքը (գունդը) սպասավորում էր Նրան): Մելքոնն էլ ասում է, թե զմուռսը տալուց հետո «տեսի զնա ի ջարջարանս մեռեալ, եւ դարձեալ յարուցեալ եւ կենդանի» (Տեսա Նրան ջարջարանքներում մահացած եւ ապա հարություն առած եւ կենդանի):

Համաձայն ավանդության՝ երեք մոգերից Գասպարը Հնդկաց աշխարհից էր, Մելքոնը՝ Պարսից, իսկ Բաղդասարը՝ Արաբիայից: Հայկական լեռնաշխարհում ձեւավորված ավանդությամբ ասվում է, թե Մոկաց աշխարհը մոգաց, այսինքն մոգերի աշխարհն է եւ անգամ Մոկս ավանի մոտի Ակնադաշտի վանքում ցույց է տրվում մոգերից Գասպարի գերեզմանը: Վարդան Արեւելցու Աշխարհացույցում այս մասին ասվում է. «Մոկաց գաւառն է իշխանանիստ, ուր կան բազում վանորայք: Նախ Ամենափրկիչն, ուր կայ գերեզման թագաւորին մոգուց Գասպարայ»[14]: Մեկ այլ պատմությունում պատմվում է, թե երեք մոգերը Երուսաղեմ գնալու ճանապարհին անցել են Եդեսիայով եւ այնտեղ հանդիպել Հայոց Աբգար թագավորին եւ մանուկ Հիսուսին մատուցել նաեւ նրա ընծաները[15]:

Առանձնակի հոգեւոր խորհուրդ է հաղորդվել մոգերի՝ թվով երեքը լինելուն, որն ըստ միջնադարյան մեկնիչների, խորհրդանշում է մարդկության երեք հասակները, ինչպես նաեւ Նոյի երեք որդիներից սերված երեք ժողովուրդներին: Այսինքն, հանձինս երեք մոգերի, Բեթղեհեմի քարայրում նորածին Հիսուսի առջեւ խոնարհվեցին մարդկության երեք հասակները եւ բոլոր ժողովուրդներն ու աշխարհամասերը (Աֆրիկա, Ասիա ու Եւրոպա՝ այն ժամանակվա աշխարհագրական ըմբռնումներով)[16]: Այս պատճառով միջնադարյան մանրանկարչությունում մոգերը համապատասխանաբար պատկերվում են պատանեկան, երիտասարդական եւ ծերունական դիմագծերով, եւ տարիքային այս առանձնահատկությունները առավել հստակորեն են շեշտվում նրանց սպիտակամորուս, թխամորուս եւ անմորուս լինելով, իսկ երեք տարբեր ժողովուրդներ եւ աշխարհամասեր ներկայացնելը պատկերվում է համապա-

13 Թանգարան հայկական հին եւ նոր թարգմանութեան, Անկանոն գիրք Նոր Կտակարանի, հտ. Բ, Վենետիկ, 1898, էջ 292:

14 «Աշխարհացոյց Վարդանայ վարդապետի», աշխտ. Հ. Պետերյանի, Փարիզ, 1960, էջ 41:

15 Տե՛ս «Հաւաքումն Պատմութեանն Վարդանայ», Վենետիկ, 1864, էջ 33, տե՛ս նաեւ **Հ. Բ. Սարգիսեան,** Երեք թագաւոր մոգերու զրոյցն հայկական մատենագրութեան մէջ. «Բազմավէպ», 1910, էջ 64:

16 «Թանգարան հայկական հին եւ նոր թարգմանութեան. Անկանոն գիրք Նոր Կտակարանի», հտ. Բ, էջ 42-43:

փասխան փարագավորմամբ: Մանրանկարներում հաճախ մոգերի գլխավերեւում գրվում են նրանց անունները:

Մոգերը պատկերվում են քարայրի մուտքի մոտ կամ նրանցից մեկը արդեն ներս մտած եւ նորածին մանկան առջեւ խոնարհված, որը խորհրդանշում է նրանց երկրպագությունը: Իսկ քարայրից դուրս՝ մանրանկարի ստորին աջ կամ ձախ անկյուններում երեք մոգերի երիվարներն են, որոնք ոչ թե կանգնած են, այլ կա՛մ ծառս եղած, կա՛մ շարժման մեջ, եթե անգամ կապված են սյանը, որով ակնարկվում է մոգերի՝ այս երիվարներով հսկայական ճանապարհ կտրելը եւ աստղի առաջնորդությամբ Բեթղեհեմյան քարայր հասնելը: Այս երկայն ճանապարհն անցնելը եւ մի աշխարհից մյուսը գնալը միջնադարյան գեղարվեստի ընձեռած հնարավորությունների շրջանակում երբեմն պատկերվել է Ծննդյան թեման ներկայացնելով բացվող ձեռագրի երկու հանդիպակաց էջերում, ինչպես օրինակ, Վասպուրական աշխարհում Ծերուն ծաղկողի կողմից 1391 թ. նկարազարդված Ավետարանում, ուր ձեռագրի իրար կից զույգ էջերից աջում պատկերված է ծնունդը, իսկ ձախում մոգերն են, որոնք ասես շտապում են կտրել թերթային արգելքը եւ անցնելով էջը՝ մի աշխարհից մյուսը, խոնարհվել մանկան առջեւ: Ինչպես մանրանկարի վերեւում է գրված. «Թագաւորքն մոգուցն գան յերկրպագութիւն»:

Մոգերի երկրպագության հետեւողությամբ նաեւ ասվում է, որ հովիվները եւս բերեցին իրենց ընծաները նորածին Մանկանը, որի համար մանրանկարներում հանդիպում է նաեւ ոչխարներ ու գառներ գրկած հովիվների փարբերակը: Եփրեմ Ասորին գրում է, որ հովիվները «մատուցեցին իրենց ընծաները՝ գառ, իբրեւ քահանայի, կաթ՝ իբրեւ ծծկերի, փառք՝ իբրեւ Աստծու»: Առաջին ընծաները հովիվները մատուցեցին Նրան. իրենց պարգեւներով մտան քարայրը եւ երկրպագեցին Նրան: Մաքի գառը մատուցեցին Աստծո գառանը, որ եկավ զոհ եւ պատարագ լինելու Աստծու եւ դադարեցնելու գառների զոհաբերությունը: Հովիվները խառնվեցին հրեշտակներին եւ փառաբանեցին Նրան»: Նաեւ ասվում է, թե Բեթղեհեմում էին պահվում Երուսաղեմի տաճարում պատարագ մատուցվող գառների եւ ոչխարների հոտերը, եւ միջնադարյան այլաբանական մտածողությամբ հովիվների ընծայումը խորհրդանշում էր, որ հրեշտակի՝ նրանց տված ավետիսից հետո Տաճարում արդեն սովորական գառները չէ, որ զեղվելու էին, այլ Աստծո Որդին ինքն էր առնելու ողջ մարդկության մեղքերը եւ պատարագվելու: Նաեւ ասվում է, որ հրեշտակի տված ավետիսով հովիվներն արժանացան տեսնել սուրբ եւ երկնային հովվին, այն հովվին, որ «զանձն Իւր դնէ ի վերա ոչխարաց (Յովհ. ԺԸ 11):

Այս միտքն է շեշտված նաեւ Ներսես Շնորհալու հետեւյալ հանելուկում.

Որոջ մի ծնաւ առանց խոյի,
Վկայ բերեմ ես զԵսայի:
Գառն էր գեր ու ստեւով լի,
Յամէն Զատկի մատաղ լինի[17]:

Հանելուկում Շնորհալին դյուրըմբռնելի եւ պարզ ոճով խտացրել է Ս. Ծննդյան խորհուրդը: Եսայի մարգարեի «Ահա կոյսն յղասցի եւ ծնցի որդի» (Եսայի Է 14) խոսքերի հետեւողությամբ գրում է, թե խորհրդաբար, առանց խոյի, ծնվում է որոջը՝ մարդկության համար պատարագվող գառը, որը մատաղ է լինում ամեն տարի Զատկին:

17 **Ա. Շ. Մնացականյան,** Հայ միջնադարյան հանելուկներ, Եր., 1980, էջ 237:

Մանրանկարների սղոցին մասում՝ քարայրի հակառակ՝ ձախ կողմում, պատկերվում է նստած Հովսեփը: Նրա այս մեկուսի վիճակով մանրանկարիչները շեշտում են, որ Հովսեփը չի Հիսուսի հայրը:

Մանրանկարի դիմահայաց սղոցին մասում պատկերվում է Եւան նորածին Հիսուսին լողացնելիս: Այս դրվագի աղբյուրը պարականոն «Գիրք տղայութեան Քրիստոսի» գործն է: Այս պատմությունում նախ ասվում է, որ երբ Հովսեփը գնում է մանկաբարձ բերելու, տեսնում է «զերկիրս բարձրացեալ եւ զերկինս խոնարհեալ»[18]: Այսինքն, այս խոսքերով, թե Քրիստոսի ծննդյամբ երկինքը վայր խոնարհվեց եւ երկիրը վեր բարձրացավ, շեշտվում է եկեղեցու հայրերի այն միտքը, թե Քրիստոս երկիր իջավ, որ մարդը երկինք բարձրանա: Այնուհետեւ ասվում է, որ Հովսեփը տեսնում է «կին մի, որ գայր ի լեռնէ անտի եւ կրաւ մի մեծ զուսովն արկեալ», եւ այն հարցին, թե ո՞վ է ինքը, ասում է. «Ես եմ նախամայրն ամենեցուն Եւա, եւ եկի տեսանել աչօք իմովք զփրկութիւն իմ, որ զործեցաւ ինձ»: Եւան այսպես գալով՝ մանկաբարձություն է անում նորածին մանկանը:

Ըստ այս պարականոնի՝ Եւայի բերած այս կրավն է դառնում Հիսուսի խանձարուրը, որով պատվեց Քրիստոս եւ Իր վրա առավ նախաստեղծի մեղքը, իսկ Տիրամոր համար մանկաբարձություն անելով Եւան քավում է իր մեղքը: Պարականոն պատմություններից եկող այս դրվագը Ծննդյան պատկերագրությունում արտահայտվում է Եւայի՝ նորածին Հիսուսին լողացնելով, որի ժամանակ լուծվում, ջնջվում է նաեւ իր գործած մեղքը: Լողացման դրվագը պատկերվում է առանձնակի արտահայտչականությամբ: Նորածին Հիսուսին գրկին պահած մի ձեռքով, մյուսով Եւան սրուգում է ջրի տաքությունը: Այս դրվագով եւս մեկ անգամ շեշտվում է մարդեղության գաղափարը:

Ինչպես Հիսուսով քավվեց Ադամի մեղքը, որը ընդգծվում է եւ այն ավանդությամբ, թե Գողգոթայում է թաղված Ադամի գանգը, եւ Գողգոթա ելնելով ու կրած չարչարանքներով ու խաչելությամբ Քրիստոս քավեց նախաստեղծի մեղքը, այնպես էլ նույն ձեւով ասվում է, թե Բեթղեհեմի այրում թաղված էր Եւան եւ Տիրամոր երկունքով քավվեց Եւայի մեղքը: Ահա այս պատճառով է, որ վերը հիշված պարականոն գործում մանկաբարձության շտապող Եւան ասում է, թե գալիս եմ իմ աչքերով տեսնելու իմ փրկությունը:

Լողացման տեսարանում Մանկանը լողացնող երկու կանանցից մեկը ձեռքը զգուշությամբ ընկղմել է ջրի մեջ՝ սրուգելու տաքությունը, որ այն հանկարծ շատ տաք չլինի եւ չվնասի Մանկանը:

Ինչպես խաչելության տեսարանում խաչափայտի ներքո պատկերվում է Ադամի գանգը, քանի որ Գողգոթա նշանակում է կառափ եւ գագաթ, այնպես էլ Ս. Ծննդյան մանրանկարներում Բեթղեհեմի այրում մսուրի ներքո պատկերվում է Եւայի գլուխը, կողքին գրված՝ «Եւա»:

Եփրեմ Ասորին գրում է, որ Եւան ծնեց նրան՝ Կայենին, Ով իր եղբոր՝ Աբելի արյունը հեղեց, իսկ Տիրամայրը ծնեց Նրան, Ով Իր արյունը հեղեց Իր եղբայրների՝ մարդկության համար:

Ահա այսպես Բեթղեհեմի այրից մինչեւ Գողգոթայի բարձունքը ձգվող ճանապարհին քավվեց նախաստեղծների՝ Ադամի ու Եւայի մեղքը:

18 Անդ, էջ 37-38: